

Ա.Յ. ԿԱԶԱՐՅԱՆ

ОСОБЕННОСТИ ПЕРЕВОДА ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ

Рассматриваются особенности художественного перевода на фактическом материале армянских, русских и английских фразеологических единиц, образованных с компонентами частей тела. Представлены способы перевода фразеологизмов, типы эквивалентных единиц, а также требования, предъявляемые к переводчику, для выполнения правильного и высокохудожественного перевода.

Ключевые слова: перевод, особенность, способ, эквивалент, фразеологизм, калькирование, дословный, описательный.

H.Z. GHAZARYAN

PECULIARITIES OF TRANSLATION OF PHRASEOLOGICAL UNITS

The peculiarities of literary translation on the actual material of Armenian, Russian and English phraseological units formed with the components of body parts are considered. The ways of translating phraseological units, types of equivalent units, as well as the requirements set to the translator to perform the correct and highly artistic translation are presented.

Keywords: translation, peculiarity, method, equivalent, phraseology, calquing, literal, descriptive.

ՀՏԴ 81'366.5

Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենի՝ առաջնալեզվային բաղաձայնների հերթագայությամբ մի շարք արմատների ստուգաբանական վերլուծությունը ծագումնաբանական փնջերով հնարավորություն է ընձեռում ստուգաբանելու հայերենի անհայտ ծագման բազմաթիվ արմատներ: Ներկա աշխատանքում ներկայացված են այդ արմատներից մի քանիսը՝ հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզուների համարժեքներով:

Առանցքային բառեր. առաջնալեզվային բաղաձայններ, ծագումնաբանական փնջեր, անհայտ ծագման արմատներ, հնդեվրոպական լեզուներ, ֆիննաուգրական լեզուներ:

Հայտնի է, որ հայերենը հնդեվրոպական ամենաառեղծվածային լեզուներից մեկն է, «թերևս ամենաառեղծվածայինը կենդանի լեզուների մեջ», ինչպես նշել է ակադ. Գ. Ջահուկյանը [1,62]:

Հայտնի է նաև, որ հայերենի արմատների մեծ մասը ստուգաբանվել է այն ժամանակ, երբ նոստրատիկ լեզվաբանության տվյալները լրջորեն չէին ընկալվում:

Ժամանակի ընթացքում հնդեվրոպական նախալեզվի բազմաթիվ արմատներ վերականգնվել են, ընդ որում բացառիկ նշանակություն է տրվել սանսկրիտի, դասական լատիներենի և հունարենի տվյալներին: Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը իրավացիորեն նշում են, որ այս պատկերը որոշակի լեզվաբանական վերլուծության արդյունք չէ, այլ ավելի շուտ արդյունք է պատմական պատահականության, որը բացատրվում է հնագույն գրական ավանդույթներ ունեցող լեզուների հեղինակությամբ [2,9]:

Խոսքը վերաբերում է նաև հնդեվրոպաբանության մեջ մեծ կարևորություն ստացած հնչյունական օրենքներին: Լեզվաբանների կողմից մշակված հնչյունական համապատասխանությունների աղյուսակները բազմիցս փոփոխությունների են ենթարկվել: Վաղուց գոյություն ունեն նաև նոստրատիկ նախալեզվի հնչյունական համապատասխանությունների աղյուսակներ (Վ. Իլիչ-Սվիտիչ [3], Ա. Բոմհարդ [4] և այլք): Այդ աղյուսակները կարող են շարունակ վերանայվել, քանի որ բառաքննական ուսումնասիրությունների ոլորտը շարունակ ընդլայնվում է՝ հիմք ստեղծելով հնչյունական նոր համապատասխանությունների համար:

Այդուհանդերձ, ներկայումս ընդունված է արմատները ծագումնաբանական փնջերով դիտարկելու տեսակետը, որի գաղափարն առաջին անգամ տվել է իտալացի լեզվաբան Ա. Տրոմբետին: Նա աշխարհի մի շարք լեզվաընտանիքների արմատները ստուգաբանել է արմատի փոփոխակները խմբավորելու սկզբունքով (*variazione della radice*)[5,23]: Ծագումնաբանական փնջերի խնդրին անդրադարձել է նաև ակադ. Գ. Ջահուկյանը, որը քննության է ենթարկել հայերենի բազմաթիվ ստուգաբանական կրկնակներ: Քննությունը ցույց է տալիս, որ ծագումնաբանական փնջեր կարող են լինել նաև մեկ առանձին լեզվում [6,300-313]:

Ըստ այդմ, արմատի ծագումնաբանորեն նույնական հնչյունական փոփոխակները անհրաժեշտ է դիտել իբրև միևնույն արմատի տարբերակներ: Ա. Մելնիչուկը հնչյունական փոփոխակները խմբավորել է ըստ արտասանության տեղի՝ հետնալեզվային և կոկորդային /k/g/gh/k/ġ/ĝh/ku/gu/ghu/H/, առաջնալեզվային /t/d/dh/s/, շրթնային /p/b/bh/m/[7,28-29]: Նոստրատիկ լեզվաբանության ընձեռած հնարավորությունների պայմաններում թերևս իմաստ չունի տվյալ արմատի՝ ցեղակից լեզուներում առկա բազմաթիվ, հաճախ հնչյունական տեսքով միմյանցից խիստ զանազանվող տարբերակները մեկ ընդհանուր նախաձևի հանգեցնելը:

Հայերենի անհայտ ծագման արմատների ստուգաբանության հիմքն է՝

1) նոստրատիկ լեզուների, մասնավորապես ֆիննաուգրական (Ֆ.-ու.) լեզուների տվյալների ներգրավումը.

2) բառային նոր նյութի ներգրավումը հնդեվրոպական (հ.-ե.) լեզուներից.

3) հ.-ե. և Ֆ.-ու. լեզուների բառային նյութի հիման վրա նոր հնչյունական օրինաչափությունների բացահայտումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ՝

ա) արմատների ստուգաբանությունը ենթադրում է առավել մեծ իմաստային դաշտի ընդգրկում. արմատի ստուգաբանությունը երբեմն դժվարանում է, քանի որ հաշվի չի առնվում հազարամյակների ընթացքում բառիմաստի կրած փոփոխությունը, և շեշտը միայն հնչյունափոխության վրա է դրվում.

բ) մեկ լեզվում արմատի հարացույցի տարբեր ձևերը այլ լեզուներում կարող են ընկալվել իբրև առանձին արմատներ[8]:

Տարբեր լեզուներում ըստ արտասանության տեղի նույնական բաղաձայների հերթագայությունը միևնույն արմատի հարացույցի ձևերի մեջ ապացուցում է արմատը ծագումնաբանական փնջերով դիտարկելու նպատակահարմարությունը:

Բաղաձայնների հերթագայության բազմաթիվ օրինակներ կան և՛ հ.-ե. (ռոմանական, սլավոնական, բալթյան ճյուղերում), և՛ Ֆ.-ուգր. լեզուներում (p~v~b~m, t~d~s, k~g~j~Ø, k~h~Ø): Այս աշխատանքում դիտարկվում են շրթնային բաղաձայնների հերթագայություն ներկայացնող ծագումնաբանական փնջերը: Այս առումով առավել հետաքրքիր են Ֆ.-ու. լեզուները, որտեղ այս հերթագայությանը հանդիպում ենք մի շարք հարացույցային ձևերում. օրինակ՝ ֆինն. *tavata* «հանդիպել» - *tapaan* «հանդիպում եմ», *juopua* «արբել» - *juoma* «խմիչք»: Գոյականների, թվականների թեք հոլովներում հանդիպում են՝ ֆինն. *leipä/leivän* «հաց», *juopa/juovan* «անդունդ», էստոն. *kimp/kimbu* «կապ, խուրձ», *leib/leiva* «հաց», *orb/orvu* «որբ», *tiib/tiiva* «թև»:

Որպես տիպաբանական երևույթ՝ հնչյունական այս հերթագայությունները հնարավորություն են ընձեռում բացահայտելու ընդհանուր բառարմատների նոր շերտեր հ.-ե., ինչպես նաև ոչ հ.-ե. լեզուների միջև:

Մի շարք լեզվաբաններ, օրինակ, Տրոմբետին [5], Մելնիչուկը [7], հնչյունական փոփոխակները խմբավորել է ըստ արտասանության տեղի՝ հիմք ընդունելով մի քանի լեզվաընտանիքների տվյալներ, առանձին ուշադրության չարժանացնելով հայերենի տվյալները: Նոստրատիկ ուսումնասիրությունների պարագայում հայերենը հաճախ նվազ ուշադրության է արժանանում, քան հ.-ե. ուսումնասիրությունների դեպքում էր, քանի որ լեզվական նյութի մեծ ծավալները

գրեթե հնարավորություն չեն ընձեռում քննության առնելու հայերենի անհայտ ծագման բառերը: Հայերենի բառամթերքի քննությունը ցույց է տալիս, սակայն, որ այն բացառիկ կարևորություն ունի:

Ստորև տրվում են հայերենի՝ շրթնային բաղաձայնների հերթագայությամբ անհայտ ծագման արմատներից մի քանիսը՝ հ.-ե. և ֆ.-ու. զուգահեռ ձևերով: Անհրաժեշտ է նշել, որ ֆ.-ու. լեզուներից առավել հնատիպ համարվող ֆիններենում հայերենի շրթնային բաղաձայնների ողջ շարքին համապատասխանում են միայն *p* և *v* հնչյունները, այլ շրթնայիններ այդ լեզվում չկան: Ֆ.-ու. այլ լեզուների *b* և *f* հնչյունները համարվում են հետագա զարգացման արդյունք: Սույն աշխատանքում ներկայացված են հայերենի անհայտ ծագման արմատներից մի քանիսը՝ հ.-ե. և ֆ.-ու. համարժեք ձևերով: Ծագումնաբանական փնջերում շրթնային բաղաձայնների հերթագայությունը հետևյալն է. /p/p^h/b/b^h/m/v/f/:

1. # Ապա «հետո, վերջը»/ *յապադեյ/ ապ-* (ժխտ. ածանց) - հ.-ե.՝ լատին. *ab*, գերմ. *ab-* (*abgeben* «վերադարձնել»), իսլ. *af-*, անգլ. *off*, սանս. *apa*, լիտվ. *be-* (*begalvis* «անգլուխ», *beširdis* «անսիրտ»), խեթ. *āppa* «մկբ., կապ, ետևում, հետ, նորից, հետագա», *āpparant* «ապագա», սեպ. լուվ. *āppa* «հետ, նորից», հ. լուվ. *apari* «հետագա», *apani* «հետո, հետագայում», սանս. *apagā*, *apagam* «հեռանալ», *apara* «հաջորդ», *aparam* «ապագայում»: Խեթ. և սանս. օրինակները թույլ են տալիս այս արմատին կապելու նաև հայերեն *ապագա* և *ապանի* բառերը: Ըստ Ջահուկյանի հ.հնդկ. *apa* «հեռու, հետ», հ.պրս. *apa* «հեռու», խեթ. *apa* «դեպի հետ», *apan* «հետո», "հ.-ե. **apo* «մի բանից հեռու»" [6,150]:

Ֆ.-ու.՝ ֆինն. *epä-* «ան-, հակա-» (*epäkypsä* «չհասած, խակ», *epäkeskinen* «ապակենտրոն»), էստ. *eba-* «ան-, հակա-» (*ebaõige* «սխալ», *ebausk* «սնահավատություն», *ebavordne* «անհավասար») ժխտ. նախածանցները, կոմի-պերմ. *абы* «ժխտ. մասն., չկա», ուդմ. *öвöl* «нет, не», էրզ. *апак* (ժխտ. մասնիկ), մոկշ. *аф* (ժխտ. մասնիկ), էրզ. *аволь*, *апак*, մոկշ. *афоль*, կոմի *абы* ժխտական մասնիկները համեմատելի են հայերենի *ապ-* նախածանցի հետ:

2. # Պաղ «փայլ»/փայլ/բալ - հ.-ե.՝ իսլ. *bal* «խարույկ», *blossi* «բոց, կրակ», *födur* «գունատ», *fölskvi* «մոխիր», նորվ. *flamme* «բոց», լատիշ. *bāls* «գունատ», *balts* «սպիտակ», *spilgts* «պայծառ», լիտվ. *balas* «սպիտակ», ռուս. *белый*, *пылать/пламя*, *пепел/палить*: Ջահուկյ.՝ *պղղ* «կայծ, կրակ», ռուս. *палить*, *пламя*, (հ.-ե. **pel-/pol-/*(s)p(h)el-* «փայլել») [6,131]:

Ֆ.-ու.՝ ֆինն. *palaa* «վառվել», *palava* «տաք, վառելիք», *palo* «հրդեհ, փայլ, բոց», *polttaa* «վառել», *päilyä* «փայլել, շողալ», *valo* «լույս», *valoisa* «լուսավոր», *vaalea* «լուսավոր», *valaista* «լուսավորել», *valkea* «սպիտակ», *välke* «փայլ», *välkkyä* «փայլել, շողալ», էստ. *palang* «այրում», *palav* «տաք, շոգ», *palavus* «տապ»

põlema «վառվել», põletama «այրել», põletav «այրող», põlev «այրվող», valge «սպիտակ», valgus «լույս», valk «սպիտակուց», väl/k, -gu «կայծակ», välkuma «փայլել», vilkuma «առկայծել», էրզ. валске «առավոտ», вальма «լուսամուտ», палозь «վառված», пултазь «այրված», паломс «վառվել», валдо «լույս, լուսավոր», մոկշ. палф «այրված», паломс «վառվել», палома «այրում», մոկշ. плхтамс «այրել», плхтаф «այրված» (лх-ն խոլ ձայնորդ է), մար. валгартараш «լուսավորել», валгалташ «շողալ», пелаш «խանձվել», հուճ. villam «կայծակ», villanni «փայլել»:

3. # Պար/պարան/պարեան/պարաիրուկ/պարար«լի»/պարիծ/պրոյր/պարանդ/ փաթա-թել/փաթիլ/փոթ - հ.-ե.՝ սանս. ԲՇ[paʈ] «ծածկել, պատել», ԲՇ[paʈa] «հագուստ, կտավ, սավան», ԲՇ[paʈʈana] «քաղաք», ԲՇ[paʈala] «ծածկոց, թիկնոց, պատեան», նորվ. fedd «թելի փաթոյթ», իսլ. fjötur «կապանքներ», ռուս. петля, խեթ. patallia «կապկպել, փաթաթել», pittula/pattula «բրդե փաթիլ, օղակ» (հայ. փաթիլ): Ջահուկյան՝ պար, պրոյր, փաթ, փաթոյթ, փոթ - գոթ. fāpa, հ.բ.գ. vade «ծածկոց», հուճ. πέτασμα [հ.-ե. * pet- «տարածել»] [6,102,129]:

Ֆ.-ու.՝ ֆինն. peite «ծածկ(ոց), կափարիչ», peittä «ծածկել», էստ. peituma «թաքնվել», peitma, peita «թաքցնել», հուճ. fedel «տանիք», fedni «ծածկել», էրզ. вадемс рудել, օծել», потш «ծող», потшны «պատնեշել», потшöс «ցանկապատ», կոմի пöдан «խոփ, դռնակ», пöдлавы «փակել», ուդմ. пытсаны «փակել», пытсэт «կափարիչ», питран «շրջանակ, անիվ», питырскыны «գլորվել», питыръяны «գլորել», путо «գոտի», մար. пүтын «ամբողջ», пүтыраш «պտտել», вүдылаш «փաթաթել», петыраш «փակել, պատնեշել», петырнаш «փակվել», питыраш «(արգելա)փակել»:

4. # Պարան /#պարթ - հ.-ե.՝ սանս. ԲՇ[paʈ] «ճեղքել, կտրել», ԲՇ[paʈara] «լույսի շերտ», իսլ. bita «կծել, արածել», buta «կտրել, հատել», biti, buttur «կտոր, հատված», անգլ. bite «կծել», bit «պատառ», նորվ. spidd «շամփուր», խեթ. išpātar/išpānn- «շամփուր, դաշույն»:

Ֆ.-ու.՝ ֆինն. pätkä «կտոր, պատառ», հուճ. pöttöm «փոքրագույն», կոմի поткöдны «ճեղքել», потны «ճաքել», ուդմ. пүтыны «ճաքել, պայթել», пүтырес «ճաքած», пүтыр-пүтыр «ճաքած, ճաքերի մեջ», մար. падраш «պատառ», падышташ «փշրել», пыдыргаш «կտրվել», пыдыргы «բեկոր, փշուր», пыдырташ «կտրել», մար. пыдешташ/пудешташ «պայթել»:

5. # Պար «շրջան»/ պարան/ պարանիլ «դառնալ»/ պարանոց/ պարոյկ «շրջան»/ պարոյր /պարտ/ բարուր/ վարանել/վարակ «կապ, հանգույց», վարագոյր/վերդ «շրթայի պես հյուսված զրահ»/փարել «պարփակել» - հ.-ե.՝ սանս. ԲՐ[paʈi-] «շուրջ», ԲՐ [var] «ծածկել, թաքցնել, շրջապատել», ԲՐ [vara]

«շրջան», հուն. σπάρτον «պարան, ճոպան», σφαῖρα «գունդ», լատին. frēnum, ī «սանձ», իսլ. byrgja «փակել, թաքցնել», brynja «գրահ», ver «ծածկոց», verja «պաշտպանել, գրահ», varna «կանխել, խոչընդոտել», շվեդ. spara «խնայել, պաշտպանել», spärr «արգելապատնեշ», var «ծածկոց», värja, värna «պաշտպանել», նորվ. spare «խնայել, պաշտպանել», sperre «արգելափակել», գոթ. warjan «խոչընդոտել», հ.անգլ. werian «պահպանել, պաշտպանել, արգելակել», ն.անգլ. wrap «փաթաթել», ռուս. вар «անասնաբակ», варнак «թիապարտ, բանտարկյալ», варовать «պահպանել, պաշտպանել», варовина «պարան», вервь, веревка, вереница «շարք», вертеть, воротить, вращать, ворот «վիզ», вора «ցանկապատ»: Ջահուկ.՝ *պար* «շրջան, պար», *փարեմ* – հուն. σπειρα «ոլորել», σπειρα «թեքում, թեքություն» [հ.-ե. *(s)per’- «պտտել»], վերտ «հյուսված» – հ.հնդկ. vartati «պտտում է, պտտվում է», ռուս. вертеть, вращать, [հ.-ե. *uer-t- «պտտել»] [6, 267-268]:

Ֆ.-ու.՝ ֆինն. paartaa «շրջապատել», piiri «շրջան», pyöreä «կլոր», pyöriä «պտտվել», pyörtää «վերադառնալ», pyörä «անիվ», pyörähtää «շրջվել», vierä «զլորվել», vyöryä «զլորվել», väärä «ծուռ, թեք, սխալ» էստ. piir «սահման», pärg «պսակ», pärgama «պսակել», pöörama «շրջել, դարձնել», pöörang «շրջադարձ», pöörduma «շրջվել», pööre «շրջադարձ, պտույտ», pöörelema, pöörella «պտտվել», էրզ. пярвк «ցանկապատ», пярямс «ցանկապատել», пире «այգի, բանջարանոց», перька «շուրջ», մոկշ. перямс «շրջապատել, շրջափակել», ուդմ. поръяны «պտտվել», մար. вѣран/вѣраѣ «հաստ պարան», հունգ. forgas «պտույտ», forogni «պտտվել», fordítani «շրջել, դարձնել», peregni «պտտվել», մար. вѣран/ вѣраѣ «հաստ պարան»: Ըստ Բ. Կոլինդերի՝ ուրալյան արմատ է[9]:

6. # Պոչ – հ.-ե.՝ ուղղակի համարժեքը միայն հնդկ. ճյուղի մեջ է՝ սանս. पृच्छ[pruccha] «պոչ, ծայր, վերջ», հինդի [pūch] «պոչ»: Մ. Ֆասմերը սանս. paścād «ետևից, ավելի ուշ» կապում է ռուս. поздний արմատի հետ, որին կցում է նաև լատին. post, լիտվ. pāskui «հետո», pāstaras «վերջին»: Հավանաբար, միևնույն արմատից է նաև ռուս. после: Ջահուկ.՝ հ.հնդկ. pūccha «պոչ», չեխ. opyš «պոչ», ռուս. опушка, [հ.-ե. *peuk-, pük-] [6,131]:

Ֆ.-ու.՝ կոմի бӧж «պոչ», ուդմ. быж «պոչ», մար. пач/поч «պոչ», пачеш/почеш «ետևից», (икте почеш весе – մեկը մյուսի ետևից), пуч/пыч «ծառի բուն, ցողուն», почлу «անատ. պոչուկ»:

7. # Վայր-ի/ վայր/որս՝ – հ.-ե.՝ սանս. वारण[vāraṇa] «թշնամական, վտանգավոր, վայրի», वैर[vaira] լատին. ferus «վայրի, կատաղի», լատիշ. vēris «անտառ», անգլ. forest:

Ֆ.-ու.՝ էրզ. *virь* «անտառ», կոմի *vör* «անտառ», *vöравны* «որս անել», *vöралөм* «որս», *vörса* «անտառային», մար. *вар* «վայրենացած», *väre* «ինչ որ տեղում», (*ик väre* – մի տեղում), *väre* – *väre* «տարբեր տեղերում, թափթփած», *вер* «տեղ, վայր, պաշտոն», *верланташ* «տեղավորել», *верын-верын* «տեղ-տեղ», *верысе* «տեղական», *вере* «ինչ որ տեղում»:

8. # *Վառ/ ուռան* «վառարան, աշտանակ» – հ.-ե.՝ սանս. *आज* [bhrāj] «փայլել, շողալ», *आज* [bhrāj] «տապակել, վառել», իսլ. *brenna* «վառել, վառվել», *varmur* «տաք», անգլ. *warm*, շվեդ. նորվ. *fyr* «կրակ», *brann* «հրդեհ», *brand* «խարան», լատիշ. *vārit* «եփել», *virt* «եփվել», լիտվ. *virinti* «եփել», *virti* «եփվել», ռուս. *бронный* «սպիտակ, լուսավոր», *варить*, խեթ. *ṽārani/urani* «վառվում է», *waranza* «վառված, վառվող»: Ջահուկ.՝ խեթ. *ṽār-* «վառել», [հ.-ե.՝ **ṽer-* «վառել»] [6,266]:

Ֆ.-ու.՝ *ֆինն.* *vāri* «գույն», էստ. *värв* «գույն, ներկ», ուդմ. *пöраны* «ճաշ եփել», *пöрась* «խոհարար», *ворскъяны* «փայլել, շողալ», *ворекъян* «փայլակ», *пуромыны* «տաքանակ», *пуромытыны* «վառել», *биректыны* «եռալ», *пырсаны* «տապակվել», հունգ. *vörös* «կարմիր», *pir* «շառագույն, արշալույս», *piros* «կարմիր», *parázs* «ջերմություն, շիկաց. ածուխ», *forrni* «եռալ», *forralni* «եռացնել», *forró* «տաք»:

9. # *Վարար, վարդ/-վերդ/ ուրդ* «փոքրիկ առու» (Շաղվերդ «մեծ ջուր», Եղիվարդ «վերին ջուր», Թաղավարդ «ներքին ջուր»- Գ.Նափանցյան[10]) – հ.-ե.՝ սանս. *वार* [vār] «ջուր», *वार्धि*[vārdhi] «օվկիանոս», *ou. furd/ ford* «ծով», լիտվ. *versmė* «աղբյուր», իսլ. *ur* «մանր անձրև», ռուս. *бара* «ճահիճ, լճակ», սերբ. *бара* «ջրափոս»: Ջահուկ.՝ հ.հնդկ. *vār, vāri* «ջուր», ավեստ. *var* «անձրև», *vairi* «ծով», հայ. գայռ «ճահիճ», հ.սկանդ. *vari* «ջուր, հեղուկ», [հ.-ե.՝ **ṽer-* «ջուր, անձրև, գետ»] [6,266]: Նաև հայ. *վարդավառ*:

Ֆ.-ու.՝ *ֆինն.* *virrata* «հոսել, լցվել», *virta* «գետ, հոսանք, հոսք», *virtaus* «հոսանք, հոսք», *virtavesi* «հոսող ջուր», *virtsa* «մեզ», *viruttaa* «լվանալ, ողողել»:

10. # *Փակ* – հ.-ե.՝ իսլ. *baga* «խանգարել», *pakka* «փաթեթավորել», շվեդ. *vägg* «պատ», *packa* «կապ, տրցակ, փաթեթավորել»: Ջահուկ.՝ *փակ/փոկ* – հուն. *πάγη* «թակարդ, որոգայթ», հ.բ.գ. *fuogan* «կապել», [հ.-ե.՝ **pag'-*, **pak'-* «ամրացնել»] [6,102,192]:

Ֆ.-ու.՝ *ֆինն.* *pakata* «փաթեթավորել» էստ. *pakkima* «փաթեթավորել», *pakk* «փաթեթ», էրզ. *пекстамс* «փակել, կողպել», *пекстамо* «փական», *пекстась* «փակված, կողպած» մոկշ. *пьястамс* «փակել, կողպել, բանտարկել»:

11. # *Փախ* – հ.-ե.՝ լատին. *fugio, ere* «փախչել», *fuga* «փախուստ», լիտվ. *bngas* «փախուստ», ռուս. *бег/бежать*: Ջահուկ.՝ *փախ* – հինդի *bhag-* «վազել, փախչել», ռուս. *бег* [հ.-ե.՝ **bhegṽ-* «փախչել»] [6,122]:

Ֆ.-ու.՝ ֆինն. pako «փախուստ», pakoilla «թաքնվել», pakolainen «փախստական», էստ. pagema «փախչել», pagemine «փախուստ», pagu, pao «արտաքսում, փախուստ», pagulane «վտարանդի, փախստական», pögenema «փախչել», pögenik «փախստական», ուղմ. пеганы «թաքնվել, խուսափել», пегась «փախստական, դասալիք», пегэыны «փախչել», пегэон «փախուստ»:

12. # *Փայտ* - հ.-ե.՝ իսլ. viður «ծառ, փայտանյութ, անտառ», baðmyr «բնստ. ծառ», նորվ. ved «փայտ, փայտանյութ», շվեդ. ved «փայտ», spade «բահ», հ.անգլ. wudu, անգլ. wood «անտառ, փայտ», հ.իռլ. fid «ծառ»:

Ֆ.-ու.՝ ֆինն. puu «ծառ», puutua «փայտանալ», էստ. puit «փայտ», puu «ծառ», puud «ցախ», կոմի бeдь «(ծեռնա)փայտ», կոմի-պերմ. бaдь «ուռենի», ուղմ. бaдь py «ուռենի», մար. py «փայտ, ծառ», հունգ. bot «փայտ»: Ըստ Բ. Կոլինդերի ուրալյան արմատ է[9]:

13. # *Փոր-/ բիր/վիրապ* - հ.-ե.՝ սանս. bhrināti «վիրավորում է», հուն. βάραινον «փոս, անդունդ», պրս. burridan «կտրել», ռուս. борозда «ակոս», боркан «գազար», борона «գյուղ. գործիք», брить, լատին. foro, āre «ծակել, շաղափել», forāmen «անցք, փոս», իսլ. bor «շաղափ», bora «շաղափել, ծակել», շվեդ. borr «շաղափ», լատիշ. bēres «թաղում», urbt «շաղափել», urbis «շաղափ», parakt «փորել»: Ջահ.՝ *փորել, բրել* – լատին. foramen «անցք», [հ.-ե. *bher- «կտրել, շաղափել»] [6,124]:

Ֆ.-ու.՝ ֆինն. purema «խայթոց», purnu «փոս, ամբար», purra «կծել, խայթել», pora «շաղափ», porata «շաղափել, ծակել», puras «դուր», էստ. purask «դուր», purema «կծել», puru «փշուր», purunema «փշրվել», purustama «կոտրել, քանդել», էստ. puurima «շաղափել», puur «շաղափ», էրզ. поремс «կրծել, ծամել», порезь «կրծած», կոմի пырöдны «շաղափել», ուղմ. портон «շաղափ», портыны «շաղափել», порыны «արմատախիլ անել», մար. пöрдaш «տաշել», пöрем «սպի», пуралаш «կտրել, հատել», пурaш «կրծել», пыргeдaш «փորել», пыpo «շաղափ», пырылаш «կծել», հունգ. furni «շաղափել», fűrész «սղոց», fűrészelni «սղոցել»: Ըստ Բ. Կոլինդերի ուրալյան արմատ է[9]:

Այսպիսով, նշված արմատների վերլուծությունը ցույց է տալիս, որ շրթնային բաղաձայնների հերթագայությունը մեկ արմատի տարբերակներում ակնհայտ իրողություն է: Ավանդական հնդեվրոպաբանության մեջ ընդունված հնչյունական օրենքներում առկա է որոշակի օրինաչափություն, սակայն բազմաթիվ շեղումները դրանցից, ինչպես նաև ծագումնաբանական կրկնակների առկայությունը միևնույն լեզվում վկայում են այն մասին, որ հնչյունական օրենքներն անխախտելի չեն, ինչպես նաև բավարար հիմք չեն ստուգաբանական եզրակացություններ կատարելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջահուկյան Գ.Բ. Հայերենի անհայտ ծագման բառարմատները // ՊԲՀ.- 1990.-N2.-էջ 62:
2. **Гамкрелидзе Т.В., Иванов Вяч.Вс.** Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Т.1.- Тбилиси,1984.- С. 9.
3. **Иллич-Свитыч В.М.** Опыт сравнения ностратических языков. Т.1-3.- М., 1971.-84с.
4. **Bomhard A.R.** Recent Trends in Nostratic Comparative Linguistics // Bulletin of the Georgian National Academy of Sciences. -2008.-Vol.2, N4.-P.148-162.
5. **Trombetti A.** L'unità d'origine del linguaggio.- Bologna, 1962.- 23 p.
6. **Джаукян Г.Б.** Очерки по истории дописьменного периода армянского языка.- Ер., 1967.
7. **Мельничук А.С.** О всеобщем родстве языков мира // Вопросы языкознания.- 1991.- № 2.- С. 28-29.
8. **Նիկողոսյան Գ.Վ.** Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ (թեկնածուական առնչություն). -2011.-46էջ:
9. **Collinder V.** A Handbook of the Uralic Languages. -Part 1.- Fenno-Ugric Vocabulary, 1977.
10. **Ղափանցյան Գ.** Հայոց լեզվի պատմություն: Հին շրջան.- Եր., 1961:

Գ.Վ. НИКОГОСЯН

ЭТИМОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ КОРНЕЙ НЕИЗВЕСТНОГО ПРОИСХОЖДЕНИЯ

Этимологический анализ ряда армянских корней с чередованием переднеязычных (губных) согласных показывает, что этимологические пучки создают возможности для определения этимологии армянских корней неизвестного происхождения. В исследование включен словарный материал индоевропейских и финноугорских языков, ранее не использованный для сравнительного анализа корней армянского языка.

Ключевые слова: переднеязычные согласные, этимологические пучки, корни неизвестного происхождения, индоевропейские языки, финноугорские языки.

G.V. NIKOGHOSYAN

ETYMOLOGICAL ANALYSIS OF SEVERAL ARMENIAN ROOTS OF UNKNOWN ORIGIN

The etymological analysis of a number of Armenian roots with alternation of frontlingual (labial) consonants shows that the analysis of roots in etymological bunches creates better opportunities to determine the etymology of Armenian roots of unknown origin. The present work includes the material of Indo-European and Fenno-Ugric languages, which has not been used in the comparative analysis of the Armenian language before.

Keywords: front consonants, etymological bunches, roots of unknown origin, Indoeuropean languages, Fenno-Ugric languages.